«Պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տարածքային կառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պաշտպանության մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-196-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝
1) 5-րդ կետում «աշխարհազորի» բառը փոխարինել «տարածքային պաշտպանության համակարգի» բառերով.
2) ուժը կորցրած ճանաչել 9.1-ին կետը.
3) լրացնել 9.2-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.
«9.2) տարածքային պաշտպանություն՝ խաղաղ և ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ռազմական բաղադրիչի հնարավորությունների բարձրացման, Հայաստանի Հանրապետության սահմանների, Հայաստանի Հանրապետության տարածքի բնակավայրերի, ռազմական օբյեկտների, ռազմավարական նշանակության ենթակառուցվածքների պահպանության և պաշտպանության համակարգ, որը ներառում է տարածքային պաշտպանության զորքերի հրամանատարությունը, տարածքային պաշտպանության զորքերը և տեղական պաշտպանության ուժերը.»:
Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի՝
1) 1-ին մասի 4-րդ կետում «ստորաբաժանումների» բառից հետո լրացնել «, տարածքային պաշտպանության համակարգի» բառերը, իսկ «աշխարհազորի համակարգի ստեղծումը,» բառերը հանել.
2) 2-րդ մասի 9-րդ և 3-րդ մասի 3-րդ կետերում «աշխարհազորի» բառը փոխարինել «տարածքային պաշտպանության համակարգի» բառերով:
Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով և 2-րդ մասը լրացնել 7-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.
«7) Հայաստանի Հանրապետության տարածքային պաշտպանության պլանը:»:
Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «պլանով» բառից հետո լրացնել «և Հայաստանի Հանրապետության տարածքային

պաշտպանության պլանով» բառերը:
Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածում.
1) 1-ին մասի 3-րդ կետից հետո լրացնել 3.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.
«3.1) մասնակցում են Հայաստանի Հանրապետության տարածքային պաշտպանության պլանի մշակման աշխատանքներին.».
2) 2-րդ մասի 8-րդ կետում «ծավալմանը» բառից հետո լրացնել «և Հայաստանի Հանրապետության տարածքային պաշտպանության պլանի իրագործմանը» բառերը:
Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «ծավալմանը» բառից հետո լրացնել «և Հայաստանի Հանրապետության տարածքային պաշտպանության պլանի իրագործմանը» բառերը:
Հոդված 7. Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասում հանել «Զինված ուժերի գլխավոր շտաբի ենթակայությամբ գործում է աշխարհազորը:» նախադասությունը:
Հոդված 8. Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետում «աշխարհազորի» բառը փոխարինել «տարածքային պաշտպանության զորքերի և տեղական պաշտպանության ուժերի» բառերով:
Հոդված 9. Օրենքի 6-րդ գլխի վերնագրում §, աշխարհազորը¦ բառը հանել:
Հոդված 10. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 29.1-ին հոդվածը:
Հոդված 11. Օրենքը լրացնել 6.1-ին գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.
«ԳԼՈՒԽ 6.1
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 29.2. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
1. Տարածքային պաշտպանության նպատակներն են՝
1) Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը համընդհանուր և համազգային բնույթ հաղորդելը.
2) հակառակորդի դիվերսիոն կամ ահաբեկչական կամ հետախուզական կամ հատուկ օպերացիաների ուժերի և այլ գործողություններից Հայաստանի Հանրապետության տարածքի, բնակչության և ենթակառուցվածքների պաշտպանության պլանավորված միջոցառումների իրականացմանն աջակցությունը.
3) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի կիրառման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների կենսագործունեության ապահովմանն աջակցությունը:
2. Տարածքային պաշտպանության խնդիրներն են՝
1) մասնակցությունը Հայաստանի Հանրապետության սահմանների պահպանությանն ու պաշտպանությանը.
2) Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման հետմղման ժամանակ առանձին մարտական խնդիրների կատարումը՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի միավորումների և զորամասերի հետ համատեղ.
3) մասնակցությունը հակառակորդի դիվերսիոն կամ ահաբեկչական կամ հետախուզական կամ հատուկ օպերացիաների ուժերի և այլ գործողությունների դեմ պայքարին.
4) ռազմական, պետական կարևորագույն և հատուկ օբյեկտների, ռազմավարական նշանակության ենթակառուցվածքների, բնակչության

պաշտպանությանն աջակցությունը:

ՀՈԴՎԱԾ 29.3. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. Տարածքային պաշտպանության համակարգը ներառում է տարածքային պաշտպանության զորքերի հրամանատարությունը, տարածքային պաշտպանության զորքերը և տեղական պաշտպանության ուժերը:
2. Տարածքային պաշտպանության զորքերի հրամանատարությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինվորական կառավարման մարմին է՝ զորամիավորման կարգավիճակով, որն ապահովում է տարածքային պաշտպանության զորքերի գործունեության կազմակերպման, ղեկավարման և պատրաստության գործընթացը:
3. Տարածքային պաշտպանության զորքերը ստեղծվում են ըստ Հայաստանի Հանրապետության տարածքային ուղղությունների մարտական խնդիրների կատարման նպատակով և կազմված են միավորումներից, զորամասերից ու ստորաբաժանումներից: Տարածքային պաշտպանության զորքերի կառուցվածքը հաստատվում է Հայաստանի Հանրապետության տարածքային պաշտպանության պլանով:
4. Տարածքային պաշտպանության զորքերն ունեն խաղաղ և պատերազմական ժամանակի հաստիքներ: Խաղաղ ժամանակի հաստիքներ ունենալու և դրանցում նշանակում կատարելու նպատակն է՝ միավորումների, զորամասերի և ստորաբաժանումների պատրաստության կազմակերպչական գործընթացի ապահովումը: Խաղաղ ժամանակի հաստիքներին (պաշտոններին) նշանակումն իրականացվում է պայմանագրային զինվորական ծառայության ներգրավման միջոցով: Պատերազմական ժամանակի հաստիքներին կատարվում է կցագրում՝ պահեստազորում հաշվառված քաղաքացիներից:
5. Տարածքային պաշտպանության զորքերի գործունեությունը կարգավորող մարտական և զորահավաքային պատրաստականության անհրաժեշտ փաստաթղթերի մշակումն իրականացվում է խաղաղ ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կողմից: Տարածքային պաշտպանության զորքերը գործում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կիրառման և զորահավաքային պլանների համաձայն: Տարածքային պաշտպանության զորքերի կիրառումը ռազմական դրության ժամանակ իրականացվում է դրանց ստեղծման ուղղություններով պաշտպանությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, դրանք կարող են կիրառվել նաև այլ ուղղությունների պաշտպանության համար:
6. Տարածքային պաշտպանության միավորումների, զորամասերի և ստորաբաժանումների պատերազմական ժամանակի հաստիքներին կցագրված քաղաքացիների պատրաստությունը խաղաղ ժամանակ իրականացվում է պահեստազորային պատրաստության միջոցառումների կազմակերպման, իսկ ռազմական դրության ժամանակ՝ զորահավաքային զորակոչի միջոցով:

ՀՈԴՎԱԾ 29.3. ՏԵՂԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԸ

1. Տեղական պաշտպանության ուժերը կազմավորվում և գործում են ըստ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման՝ որպես համայնքի պաշտպանության ստորաբաժանումներ:
2. Տեղական պաշտպանության ուժերը, կապված համայնքի սահմաններից (տարածքից) և համայնքում հաշվառված բնակչության թվից՝ բաղկացած են առանձին գումարտակներից կամ առանձին վաշտերից:

3. Տեղական պաշտպանության ուժերի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է տվյալ համայնքի (համայնքների) վարչական տարածքի (տարածքների) պաշտպանությունն ապահովող Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համապատասխան զորամիավորումը: Տեղական պաշտպանության ուժերը ներառվում են զորամիավորման ենթակայությամբ գործող զորամասերի կազմում՝ որպես աջակցող ստորաբաժանումներ:
4. Տեղական պաշտպանության ուժերի ստորաբաժանումները (այսուհետ՝ ստորաբաժանումներ) համալրվում են տվյալ համայնքում հաշվառված, պատերազմական ժամանակի հաստիքներին չկցագրված և պահեստազորի երկրորդ խմբում հաշվառված կամ զինվորական հաշվառումից հանված անձանցով՝ կամավորության սկզբունքով: Ստորաբաժանման կազմում անձի ներառման հիմքը նրա հետ կնքված պայմանագիրն է, որը չի համարվում զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր: Պայմանագիր չի կարող կնքվել այն անձի հետ՝
1) ով ենթակա է պարտադիր զինվորական ծառայության,
2) ով հանդիսանում է զինծառայող կամ ոստիկանության ծառայող կամ փրկարար ծառայող կամ քրեակատարողական ծառայող կամ հարկադիր ծառայող,
3) ով պատիժ է կրում ազատազրկման կամ կալանքի ձևով, կամ ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում:
5. Ստորաբաժանումների համալրումը և պայմանագրերի կնքումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինվորական կոմիսարիատները՝ համագործակցելով սույն հոդվածի 3-րդ մասում նշված զորամասերի հետ:
6. Ստորաբաժանումները խաղաղ ժամանակ անցնում են պատրաստություն՝ տարածքային պաշտպանության խնդիրների ապահովման ուղղությամբ, որն իրականացվում է համապատասխան զորամասի պատրաստության պլանների համաձայն անցկացվող պարապմունքների և վարժանքների միջոցով: Ստորաբաժանումների կիրառումը, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության սահմանների պահպանության և պաշտպանության նպատակով, իրականացվում է զորամիավորման հրամանատարի հրամանով՝ ըստ այն զորամասի մարտական խնդիրների, որի կազմում ներառված է ստորաբաժանումը:
7. Ստորաբաժանումներում ներգրավված քաղաքացուն հատկացվում է զինվորական համազգեստ, պատրաստության և կիրառման ժամանակահատվածում նրան ամրակցվում է զենք, ապահովվում է անվճար սննդով և բժշկական սպասարկմամբ՝ զինծառայողների համար սահմանված կարգով, նրա համար հաշվարկվում է դրամական ապահովություն՝ ըստ նշանակված (զբաղեցրած) զինվորական պաշտոնի՝ պայմանագրային զինծառայողների համար օրենքով սահմանված չափով: Ստորաբաժանումներում ներգրավված քաղաքացու վրա, կնքված պայմանագրի շրջանակներում պատրաստության և կիրառման ժամանակահատվածում, տարածվում են զինվորական կանոնագրքերի պահանջները և զինծառայողների նկատմամբ օրենքով սահմանված պատասխանատվությունը: Ստորաբաժանումներում ներգրավված աշխատող քաղաքացիների վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջները: Ստորաբաժանումների կազմում ներգրավված քաղաքացիներին զենքի ամրակցման և պահպանման կարգը, կնքվող պայմանագրի օրինակելի

ձևը սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով:»:
Հոդված 12. Եզրափակիչ մաս
1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա, իսկ սույն օրենքի 11-րդ հոդվածի համաձայն Օրենքի 29.3-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տարածքային կառավարման մասին» 2019 թվականի նոյեմբերի 14-ի ՀՕ-252-Ն օրենքում ուժը կորցրած ճանաչել 5-րդ հոդվածի 4-րդ մասը և 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը:
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքում ուժը կորցրած ճանաչել 48-րդ հոդվածի 6.2-րդ, 68-րդ հոդվածի 3-րդ և 102-րդ հոդվածի 4-րդ մասերը:
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքում ուժը կորցրած ճանաչել 30-րդ հոդվածի 2-րդ մասը և 40-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը:
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: